ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 60) 80 80 03
Էլ. փոստ info@moh.am

_____N _____

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հուլիսի14-ի թիվ 04/5-1/10452-2020 գրության՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետին համապատասխան՝ կից Ձեզ եմ ներկայացնում Կայունացման և Զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում»2018 թվականի ապրիլի 3-ի դրամաշնորհային համաձայնագրին կից թիվ 1 լրացուցիչ համաձայնագրի հիմնավորումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՇԱՎԱՐՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

14.07.2020

X

ՇԱՎԱՐՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN SHAVARSH 2104840295

Կատարող՝ Մ.Աղաջանովա,
ԱԾԻԳ, հեռ: 29-75-36

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կայունացման և Զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» 2018 թվականի ապրիլի 3-ի դրամաշնորհային համաձայնագրին կից թիվ 1 լրացուցիչ համաձայնագրի

Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգում ներկայում իրականացնում է Կայունացման և Զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Դրամաշնորհային ծրագիր)։ Հայաստանի Հանրապետությունում ոչ վարակիչ հիվանդությունների՝ մասնավորապես կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելմանն ուղղված 1 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ Դրամաշնորհային ծրագրի Համաձայնագիրը ստորագրվել է 03.04.2018թ. և ուժի մեջ է մտել 21.09.2018թ.։

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ սահմանամերձ 3 մարզերում՝ Լոռիում, Տավուշում և Սյունիքում իրականացնել կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություններ կանանց 50-69 տարիքային խմբում՝ ապահովելով առնվազն 50% ընդգրկվածություն։

Ներկա պահին, սքրինինգային ծրագրերի իրականացման նպատակով ձեռք է բերվել շարժական մամոգրաֆիայի սարքավորում։ Սարքավորումը արդեն Հայաստանում է։

Ծրագրում ընդգրկված ազգաբնակչությանը ծրագրի վերաբերյալ ինարավորինս տեղեկացնելու նպատակով իրականացվել են հանրային իրազեկման քարոզարշավի մի շարք նախապատրաստական աշխատանքներ։

Ծրագրում ընդգրկված բժշկական և վարչական անձնակազմի վերապատրաստման նպատակով մշակվել են հետազոտությունների վարման

համապատասխան ընթացակարգեր և գործառնական ձեռնարկներ, ներկայում ընթացքի մեջ է կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ իրականացնող անհատ խորհրդատուի ընտրության գործընթացը։

Սքրինինգային հետազոտությունները նախատեսվում է մեկնարկել 2020թ.երկրորդկիսամյակում։

Հաշվի առնելով առողջապահության բնագավառում տեղի ունեցած փոփոխությունները, ստորագրվել է Կայունացման և Զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» 2018 թվականի ապրիլի 3-ի դրամաշնորհային համաձայնագրին կից թիվ 1 լրացուցիչ համաձայնագիրը, որը, համաձայն «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի, ենթակա է հաստատման ՀՀ Նախագահի կողմից։

Դրամաշնորհային Համաձայնագրի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. հիմք ընդունելով «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 19.06.2019թ.ՀՀ օրենքը՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ՈՒԱԿ), որը ներառված էր 2017-2020թթ. մասնավորեցման ենթակա պետական կազմակերպությունների ցանկում, հանվել է նշված ցանկից։Համաձայն ՀՀ կառավարության 22.08.2019թ. թիվ 1064-Ա որոշման՝վերջինիս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Առողջապահության նախարարությանը։ Հարկ է նշել, որՈՒԱԿ-ը Հայաստանում միակ մասնագիտացված կազմակերպությունն է, որտեղ հնարավոր է իրականացնել ուռուցքային հիվանդությունների ամբողջական և բազմակողմանի բուժում/վարում, այդ թվում՝ հիվանդության ախտորոշում, քիմիոթերապիա, վիրահատական միջամտություն և ճառագայթային բուժում։

Հայտնում եմ, որ Դրամաշնորհային ծրագրի իրագործման ընթացքում էական դերակատարում ունի Բժշկական կենտրոնը, որի մասնագետները պետք է վերծանեն մարզերում իրականացված սքրինինգային մամոգրաֆիկ հետազոտությունները և որին, որպես սեփականություն, պետք է հանձնվի շարժական մամոգրաֆիայի սարքավորումը։ Ներկայում ծրագրում ընդգրկված Բժշկական կենտրոնը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն է (այսուհետ՝ ՍԳԼ)։ Տվյալ դեպքում, վերջինիս փոխարեն առաջարկվել է ծրագրում ընդգրկել ՈՒԱԿ-ը, որն,ի տարբերություն ՍԳԼ-ի, որը ժամանակին ներառվել է ծրագրում որպես Առողջապահության նախարարության ենթակայության ամենաբազմապրոֆիլ բժշկական կենտրոն, նեղ մասնագիտական ծառայություններ է մատուցում քննարկվող բնագավառում և ունի համապատասխան մասնագիտական կարողություններ։ Առաջարկվող փոփոխությունը հնարավորություն կտա ծրագրի շահառուներին մատուցել առավել որակյալ բժշկական ծառայություններ, քանի որ սքրինինգային հետազոտությունների արդյունքում հիվանդության բացահայտման դեպքում ՈՒԱԿ-ը կապահովինաև հիվանդության անխափան վարման և պացիենտի հետագա բուժման գործընթացը։ Ծրագրում մասնագիտացված կենտրոնի ներգրավումը, մեր կարծիքով, կնպաստի նաև համապատասխան մասնագետների կրթմանն ու մամոգրաֆիայի սարքավորման հետագա պահպանությանն ուղղված ծախսերի տնտեսմանը։

Առողջապահության նախարարությունը վստահ է, որ Դրամաշնորհային Համաձայնագում առաջարկվող փոփոխությունը հնարավորություն կտա հասնելու առավելագույն արդյունավետության ծրագրի իրագործման տեսանկյունից՝ ապահովելով պոտենցիալ հիվանդների հետագա բուժումը մասնագիտացված կենտրոնում և նպաստելով ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների հնարավորինս նպատակային ծախսմանը։